

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք
Փ Ո Փ Ո Ն Կ Ո Ղ Հ Ո Դ Կ Ա Շ Ն Ե Ր Ի Կ Ե Ր Ա Բ Ե Ր Յ Ա Լ

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ա Ն

Օ Ր Ե Ն Ք Ը

**«ՂԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 46. Պարտապանի դրամական միջոցների վրա բռնագանձում տարածելու կարգը

1. Պարտապանի մոտ հայտնաբերված դրամով կանխիկ դրամական միջոցները հարկադիր կատարողն առգրավում է և ոչ ուշ, քան այն առգրավելու հաջորդ օրը, հանձնում է բանկ՝ հարկադիր կատարման ծառայության մարզային ստորաբաժանման դեպոզիտ հաշվին:

2.1 Բանկերի և այլ վարկային կազմակերպությունների հաշիվներում ու ավանդներում պարտապանի ունեցած դրամական միջոցների մասին տեղեկությունների առկայության դեպքում հարկադիր կատարողն արգելանք է դնում դրանց վրա:

2.2. Պարտապանի մոտ դրամական միջոցների առկայության դեպքում պարտապանի հաշիվները սպասարկող բանկը կամ այլ վարկային կազմակերպությունը հնարավորինս սեղմ ժամկետում, բայց ոչ ուշ, քան արգելանք դնելու հաջորդ օրը, էլեկտրոնային հաղորդագրության միջոցով հարկադիր կատարողին տեղեկացնում է պարտապանի դրամական միջոցների վրա դրված արգելանքի չափի մասին:

2.3. Հարկադիր կատարողը սույն հոդվածի 2.2-րդ մասով սահմանված տեղեկությունը պարտապանի հաշիվները սպասարկող բանկի կամ այլ վարկային կազմակերպության կողմից ստանալուց հետո էլեկտրոնային հաղորդագրության միջոցով հանում է այն բանկում կամ այլ վարկային կազմակերպությունում պարտապանի ունեցած դրամական միջոցների վրա դրված արգելանքը, որն անհրաժեշտ չէ պարտապանի պարտավորության ապահովման համար:

2.4. Պարտապանի կողմից իր պարտավորությունը մասնակի կատարվելու դեպքում հարկադիր կատարողը պարտապանի հաշիվներն սպասարկող բանկին

կամ այլ վարկային կազմակերպությանն ուղարկվող էլեկտրոնային հաղորդագրության միջոցով կատարված պարտավորության չափով հանում է պարտապանի ունեցած դրամական միջոցների վրա դրված արգելանքը:

3. Հարկադիր կատարողը կատարողական թերթը պատշաճ ձևով ուղարկում է անմիջապես բանկ կամ այլ վարկային կազմակերպություն:

4. Պարտապանի մոտ դրամական միջոցների առկայության դեպքում պարտապանի հաշիվները սպասարկող բանկը կամ այլ վարկային կազմակերպությունը կատարողական թերթը հարկադիր կատարողից ստանալու օրվանից եռօրյա ժամկետում դրանք փոխանցում է հարկադիր կատարման ծառայության մարզային ստորաբաժանման դեպոզիտ հաշվին:

5. Անհրաժեշտության դեպքում հարկադիր կատարողը հարցում է կատարում հարկային մարմիններին, որոնք պարտավոր են եռօրյա ժամկետում տեղեկատվություն ներկայացնել հարկադիր կատարողին: